ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 Մայիսի 2015 թվականի N 10 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով , 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 20-ի << ՀՀ օրենսդրությամբ Սարամեջ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին >> թիվ 29 –Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները :

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :
2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 – օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները :
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ(4)	ԴԵՄ(0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ			
ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ			
ՄԱՆՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ			
ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ			

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարամեջ համայնքի ավագանու
2015 թվականի մայիսի 06-ի N 10-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Սալվի Եսայան _ 30000 հազար դրամ
2. Նվեր Ֆարմանյան _ 35000 հազար դրամ
3. Ստեփան Սաֆարյան _ 25000 հազար դրամ
4. Սուզաննա Ֆարմանյան- 30000 հազար դրամ
5. Էդմոն Թադևոսյան – 30000 հազար դրամ
6. Մարիամ Սահակյան – 30000 հազար դրամ
7. Լաուրա Թորոսյան – 30000 հազար դրամ
8.Վեներա Եղիազարյան – 30000 հազար դրամ
9.Դիանա Գրիգորյան _ 30000 հազար դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 270000 (երկու հարյուր յոթանասուն հազար) հհ դրամ:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 Մայիսի 2015 թվականի N 11 -Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին >> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների և հիմք ընդունելով << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի >> 27.03.2015թ. թիվ 29 դրական եզրակացությունը համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Լոռու մարզի Սարամեջ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-098-0066-0003 ծածկագիր 0.8270 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների կառուցման հողերի գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, որից՝

- 0.25181 հեկտար հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ համայնքային կենտրոնի պետական գրանցման և նախատեսվող մանկապարտեզի շենքի կառուցման համար
- 0,5752 հեկտար բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ փաստացի բնակելի շինություններով զբաղված հողամաս , քարտեզագրման սխալի ուղղման նպատակով

2. Առաջարկել համայնքի ղեկավարին իրականացնել իրավունքների պետական գրանցում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ(4)	ԴԵՄ(0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ			
ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ			
ՄԱՆՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ			
ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ			

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ